Հավելված
ՀՀ կառավարության 2017 թ.
դեկտեմբերի 7-ի նիստի N 51
արձանագրային որոշման

Ց Ա Ն Կ

ՀԱՆՔԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳԻ ԿԱՏԱՐՈՒՄՆ ԱՊԱՀՈՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

NN ը/կ	Միջոցառումը	Նպատակը	Ակնկալվող արդյունքը	Պատասխանատու կատարողները	Ժամկետը	Ֆինանսավորման աղբյուրը
1.	Տնտեսական գնահատում՝ Հայաստանի Հանրապետության համար հանքարդյունաբերական ներդրումների տարբեր տեսակների տնտեսական կենսունակության կամ նպատակահարմարության գնահատում	Հայաստանի Հանրապետությունում տարբեր հանքարդյունաբերական ծրագրերում կիրառվող տեխնոլոգիաների գնահատում և այն աշխատանքների բացահայտում, որոնք պահանջում են մեխանիզացման ավելի բարձր մակարդակ և բարելավված կառավարում: Հանքարդյունահանման ոլորտի հարկաբյուջետային համակարգի ընդհանուր վերլուծություն, ինչպես նաև տարբեր ծրագրերի տնտեսական կենսունակության գնահատում, տեղական տարածաշրջանային և ազգային տնտեսություններում հանքարդյունահանման տարբեր ծրագրերի ունեցած ներդրման գնահատում:	Հայաստանի Հանրապետության համար հանքարդյունաբերական ներդրումների տարբեր տեսակների տնտեսական կենսունակության կամ նպատակահարմարության գնահատման ապահովում	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	2018 թ. հունիսի 3-րդ տասնօրյակ	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ

2.	Շրջակա միջավայրի և առողջության գնահատում՝ հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված ներդրումների հետ կապված ռիսկերի վերհանում և տեխնիկական կարողությունների գնահատում	Բնապահպանական և սոցիալական հիմնական հարցերի գնահատում և գործնական առաջարկների ներկայացում՝ ինչպես կարող են կարգավորվել բացահայտված բացասական իրողությունները և ընդլայնվել զարգացման դրական հնարավորությունները: Հայաստանի Հանրապետությունում հանքարդյունաբերական տարբեր ծրագրերում գոյություն ունեցող այն խնդիրների գնահատում, որոնք վերաբերում են աշխատանքի առողջ և ապահով պայմաններին:	Հանքարդյունաբերության ոլորտի զարգացմանն ուղղված ներդրումների հետ կապված ռիսկերի վերհանման և տեխնիկական կարողությունների գնահատման ապահովում:	ՀՀ բնապահպանության նախարարություն	2018 թ. սեպտեմբերի 3-րդ տասնօրյակ	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ
3.	Հանքարդյունաբերության ոլորտի զարգացման ռազմարավության մշակում	Նպաստել հանքարդյունաբերության ոլորտի քաղաքականության ձևավորմանը և ապահովել ոլորտի կայուն զարգացումը	ՀՀ կառավարության արձանագրային որոշման նախագիծ	ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարություն	2018 թ. դեկտեմբերի 2-րդ տասնօրյակ	ՀՀ օրենքով չարգելված այլ միջոցներ